ՀՍԽՀ-ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

# ՏՐԱԿՏՈՐԻՍՏԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

# ПАМЯТКА ТРАКТОРИСТА

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

629.113
S-99

2659
629.113
Դn. 99

Հ Ս Խ Հ Հ Ո Ղ Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

# ՏՐԱԿՏՈՐԻՍՏԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

# ПАМЯТКА ТРАКТОРИСТА

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ԵՐԵՎԱՆ

24 AUG 2013

Գյուղհրատի տպարան
Սրբագրիչ Խ. Այվազյան
Թույլատրված է Գ. Լ.
Պատ. № 329 տիրաժ 800

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
Ա. МЯСНИКЯНИ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
S6944-66

## 456. ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Նշելով խորհտնտեսություններում և ՄՏ-Կայաններում վառելանյութի անտնտեսավարական օգտագործումը, Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը գտնում է, որ յուղելիքի և վառելանյութերի մատակարարման, ՄՏ Կայաններում ու խորհտնտեսություններում նրանց պահպանման և օգտագործման գոյություն ունեցող սիստեմը նպաստում է վառելանյութերի և յուղելիքի շռայլությանը և անտնտեսվար ծախսմանը, և որ ԽՍՀ Միության Հողագործության Ժողկոմատի ու Խորհտնտեսությունների Ժողկոմատի օրգաններն այդ յերևույթի դեմ բավականաչափ ապերատիվ պայքար չեն մղում։

Անտնտեսավարությունը վերացնելու, վառելանյութերի և յուղելիքի մատակարարման գործի կազմակերպումը, ՄՏ Կայաններում ու խորհտնտեսություններում նրանց պահպանումը և օգտագործումը արմատապես բարելավելու նպատակով, Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը որոշում է՝

Սահմանել ՄՏ Կայաններին և խորհտընտեսություններին վառելանյութով և յուղելիքով մատակարարման հետևյալ սխեմը։

1. Նավթտորգը ՄՏ Կայաններին և խորհտնտեսություններին վառելանյութ ու յուղելիք է վաճառում իր պահեստների (1.060 պահեստներ) միջոցով։

Բացի այդ, հենց այդ նպատակով էլ Նավթտորգին պետք է հանձնվի սպառկոոպերացիայի 100 տոնն և ավելի տարեկան շրջանառություն ունեցող բոլոր պահեստները, այն հաշվով, որ այդ պահեստները գտնվելով Նավթտորգի սիստեմում մատակարարեն նաև սպառկոոպերացիայի խանութներին՝ լայն սպառման շուկայի համար։



2. Յուրաքանչյուր ՄՏ Կայանում և խորհտնտեսություններում ստեղծվում են վառելանյութի և յուղելիքի ինքնուրույն բազաներ (պահեստներ), որոնք բաց են թողնում վառելանյութ և յուղելիք ՄՏ Կայանների և խորհտնտեսությունների կարիքների համար՝ նրանց դիրեկտորների նարյադների համաձայն սահմանված նորմաների և տրակտորների կատարած աշխատանքների մակարդակի չափ։

3. ՄՏ Կայանների և խորհտնտեսությունների կազմի մեջ մտնող բազաները ենթարկվում են ՄՏԿ-ների և խորհտնտեսությունների դիրեկտորների կարգադրություններին—վառելանյութի և յուղելիքի բաց թողնելու կարգի, պահպանման և ամբողջության ու ապահովության համար և հանդիսանում են տնտհաշվարկային կազմակերպություններ, որոնք բաց են թողնում տվյալ ՄՏ Կայանի և տվյալ խորհտնտեսության կարիքների համար վառելանյութեր, սահմանված լիմիտի և նորմայի շրջանակներում։

4. Այն դեպքերում, յեթե ՄՏ Կայանի կամ խորհտնտեսության դիրեկտորը պահանջ է

ներկայացնում սահմանված լիմիտից և նորմայից ավել վառելանյութ կամ յուղելիք բաց թողնելու, բաղայի վարիչը պարտավոր է հրաժարվել կատարելու դիրեկտորի նման կարգադրությունը։

ՄՏ Կայանների և խորհտնտեսությունների դիրեկտորների պահանջի համաձայն, սահմանված լիմիտից և նորմայից ավել վառելանյութ և յուղելիք բաց թողնելու դեպքում, ՄՏ Կայանների և խորհտնտեսությունների դիրեկտորներն ու բաղա-պահեստների վարիչները դատական պատասխանատվության են յենթարկվում։

4. Բրիգադներում վառելիք և յուղելիք ստանում են բրիգադիրը կամ թե նրանց բացակայության ժամանակ—ավագ զապրավշչիկը, վորի վրա յե դրվում վառելանյութի և յուղելիքի պահպանումը և բաց թողնելը տրակտորիստներին՝ նրանցից յուրաքանչյուրի արտադրական պլանին համապատասխան։

5. Տրակտորիստը բրիգադիրից վառելանյութ և յուղելիք է ստանում անդորրագրով (տալոնով), վորը տրվում է տրակտորիստներին բրիգադների կամ թե խորհտնտեսության բաժանմունքի վարիչի կողմից տրակտորիստի արտադրական առաջադրանքի համապատասխան։



6. Բաղայի վարիչին հաստատում են ՄՏ Կայանի կամ խորհտնտեսության դիրեկտորի առաջադրությամբ՝ մարզային հողբաժինը կամ թե հանրապետությունների հողժողկոմատները, համապատասխան խորհտնտեսությունների տրեստները և կարող են աշխատանքից հանվել միայն այդ օրգանների կողմից։

ԱԳԽ Նախագահ՝ Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅԱԲԻՆ)

ԱԳԽ Քարտուղար՝ Ի. ՄԵԺԼԱՈՒԿ

Հրատ. „Известия ЦИК Союза ССР и ВЦИК" № 311, 1933 թ. դեկտեմբերի 24-ին

## ՀՐԱՄԱՆ 01/116

### ՆԱՎԹԻ ՊԱՀԵՍՏՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՄՏ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՈՒ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

*Անցյալ տարի ՄՏ կայանների և խորհտնտեսությունների կողմից դեպի նավթամթերքն խայտառակ վերաբերմունքի հետևանքով թույլ է տրվել վառելանյութի զգալի գերածախս։*

*Բազմաթիվ ՄՏ կայաններում (խորհտնտեսություններում) նավթի պահեստներն ամենևին չեն կազմակերպված, սարքավորման ինվենտարը չի օգտագործվում, նավթամթերքներն օգտագործվում են վոչ տնտեսաբար և հափշտակվում են։*

*Պետության համար այնքան թանկարժեք այդ մթերքների նկատմամբ նման հանցագործ վերաբերմունքը տեղ է գտել միայն այն բանի հետևանքով, վոր յերկրային (մարզային) և հանրապետական հողային օրգանների կողմից չի յեղել ՄՏ կայանների (խորհտնտեսությունների) վառելանյութային տնտեսության ամենօրյա ոպերատիվ ղեկավարություն և անթույլատրելի չափով թույլ է յեղել հսկողությունը վառելանյութի ծախսման վրա։*

*Վառելանյութային տնտեսության այդպիսի դրությունը չի կարելի հանդուրժել։*

*Վառելանյութային տնտեսությունն անհրաժեշտ ձևով կազմակերպելու և ԽՍՀՄ Հողժողկոմատի սիստեմում վառելանյութի և յուղելու նյութերի ծախսման գործում խստագույն խնայողություն անելու համար, ԱՊԽ-ի 1933 թ. դեկտեմբերի 22-ի վորոշման համաձայն*

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

*1. Հանրապետությունների հողժողկոմատներին, յերկրային (մարզային) հողբաժիններին և ԽՍՀՄ Հողժողկոմատի սիստեմում յեղած ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորներին՝ ամենաուշը*

մինչև 1934 թվի մարտի 1-ը յուրաքանչյուր ՄՏ կայանում և յուրաքանչյուր խորհտընտեսությունում նավթային տնտեսությունն առանձնացնել վորպես ինքնուրույն տնտեսավարական նավթային բազա (պահեստ)։

Նույն ժամկետում հանրապետությունների հողժողկոմատները, յերկրային (մարզային) հողբաժինների վարիչները պարտավոր են նավթային բազաների վարիչներ նշանակել։

Նավթային տնտեսության վարիչի վրա դնել հետևյալ պարտականությունները.

ա) Նավթամթերքի և պինդ վառելանյութի ընդունումը, պահպանումն ու բաց թողնումը։

բ) Պայքար նավթամթերքի և այլ տեսակի վառելանյութերի կորուստների, հափշտակումների դեմ, ինչպես փոխադրությունների ժամանակ, այնպես էլ պահպանելիս և բաց թողնելիս։

գ) Հսկել մատակարարողի պահեստից ստացվող վառելանյութի վորակի վրա, վորի համար ստացվող վառելանյութերից նմուշ վերցնել և ուղարկել մոտակա լաբորատորիան՝ վորակը պարզելու և ստացվող վառելանյութը տեխնիկական նորմաներին անհամապատասխան լինելու դեպքում, արձանագրություն կազմել և ուղարկել համապատասխան մարմիններին։



դ) Կազմակերպել նավթի բազայի և կահավորման պահպանությունը։

ե) Ժամանակին, ըստ սահմանված լիմիտների, մատակարարողի պահեստներից նավթամթերք ընտրել և հետևել պաշարի լինելը այդ պահեստներում։

զ) Ապահովել լիքը և դատարկ նավթամանների փոխադրությունները և այդ ամանները փչանալու գործում հանցավորներին պատասխանատվության կանչել։

է) Պահպանել ու վերանորոգել նավթամանները և ապահովել տակառների մետաղի խցանների պահպանությունը։ Ամանները կամ խցանները կորսվելու դեպքում մեղավորներին պատասխանատվության յենթարկել։

ը) Հավաքել գործածված յուղերը և ուղարկել նաֆթատորգի կայանները ռեգեներացիայի (վերամշակման) համար։

թ) Խստագույն ոպերատիվ հաշվառում ունենալ և հաշվետվություն տալ բոլոր տեսակի վառելանյութերի ու ամանեղենի ստացման, ծախսման և գոյության մասին: Հաշվառումն ու հաշվետվությունը նավթի բազայի վարիչը տալիս է ինքն անձամբ. Նավթի բազաներում լրացուցիչ հաստիք (բացի վարիչից) չի թույլատրվում ունենալ:

Նավթի բազայի վարիչի թեկնածու առաջադրվում են ՄՏ կայանների (խորհտնտեսությունների) դիրեկտորների կողմից և հաստատվում են անձամբ հանրապետության հողժողկոմի, յերկրային (մարզային) հողբաժնի վարիչի կողմից:

Նավթի բազայի վարիչի աշխատավարձի չափ սահմանել ամսական 300 ռուբլի:

2. Նավթի բազան մտնում է ՄՏ կայանի (խորհտնտեսության) կազմի մեջ և յենթարկվում է ՄՏ կայանի (խորհտնտեսության) դիրեկտորի կարգադրություններին՝ վառելանյութի և յուղելու նյութերի բաց թողնման, պահպանման գծով:



3. Հանրապետությունների հողժողկոմատները, յերկրային (մարզային) հողբաժինների վարիչները, հաշվի առնելով հողային պայմաններն ու տրակտորային աշխատանքի պլանը, յուրաքանչյուր ՄՏ կայանի (խորհտնտեսության) համար սահմանում են վառելանյութի և յուղելու նյութերի ֆոնդի նորմաներ, յելնելով վառելանյութի գործածման նոր նորմաներից:

4. ՄՏ կայանների և խորհտնտեսությունների դիրեկտորներն էլ, իրենց հերթին, համաձայն տրակտորային աշխատանքի պլանի, ոդերևութաբանական և հողային պայմանների և տրակտորների ու ինվենտարի վիճակի՝ յուրաքանչյուր տրակտորային բրիգադի համար լիմիտներ են սահմանում ըստ վորոշակի քանակի հեկտարների վրա կատարելիք աշխատանքի:

Վառելանյութ և յուղելու նյութ ստանալու համար ՄՏ կայանների և խորհտնտեսությունների դիրեկտորները բրիգադիրներին բաց են թողնում հատուկ չեկեր (տալոններ), յուրաքանչյուր ջոկատի համար սահմանված լիմիտների սահմաններում:

Նավթի բազայի վարիչը վառելիք և յուղելու նյութերը բաց է թողնում միայն վերոհիշյալ հատուկ տալոններով, վորոնք նավթի բազայի համար հաշվետվության փաստաթուղթ են հանդիսանում։

5. Տրակտորային ջոկատի բրիգադիրն իր ստացած չեկերը (տալոնները) բաժանում է տրակտորներին, վորոշակի թվով հեկտար հող մշակելու համար, հաշվի առնելով աշխատանքի վերոհիշյալ պայմանները։

6. ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորները բրիգադին տված տալոնները վերջանալուց հետո պարտավոր են անձամբ ստուգել, թե ծախսած վառելիքի ու յուղելու նյութերի քանակը վորքան է համապատասխանում ջոկատների կատարած աշխատանքի քանակին։

Վառելիքի և յուղելու նյութերի գերածախս հայտաբերելու դեպքում բրիգադիրները պարտավոր են անմիջապես հայտնել այդ մասին ՄՏ կայանի (խորհտնտեսության) դիրեկտորին։

Վառելիքի և յուղելու նյութերի գերածախս անելու համար ՄՏ կայանի (խորհ-



տնտեսության) դիրեկցիան պարտավոր է, ԱԳԽ-ի 1933 թվի սեպտ. 21-ի № 827 վորոշման համաձայն, անմիջապես տրակտորիստներից տուգանք գանձել նորմայից ավելի ծախսված նավթամթերքի արժեքից 5 անգամ ավելի չափով։

Վառելանյութերի խնայողության համար (սահմանված նորմաներից քիչ ծախսելու դեպքում) ՄՏ կայանների (խորհտնտեսության) դիրեկտորները պարտավոր են յուրաքանչյուր 15 որը մեկ տրակտորիստներին պարգևատրել 50 տոկոսի չափով, իսկ յուղելու նյութերի խնայողության դեպքում՝ խնայված նյութերի արժեքի 25 տոկոսի չափով։

7. ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորներն իրավունք չունեն նավթի բազայի վարիչին պահանջ ներկայացնելու, վոր նա սահմանված նորմաներից ու լիմիտներից ավելի քանակով վառելանյութ և յուղելու նյութեր բաց թողնի։ Բազայի վարիչն էլ իր հերթին, յեթե նրան ՄՏ կայանի կամ խորհտնտեսության դիրեկտորի կողմից այդպիսի պահանջներ են ներ-

կայացվում, պարտավոր է հրաժարվել նման կարգադրությունները կատարելուց։

ՄՏ կայանների և խորհտնտեսությունների դիրեկցիաների կարգադրությամբ սահմանված նորմաներից ու լիմիտներից ավելի վառելիք ու յուղելու նյութեր բաց թողնելու համար հանրապետությունների հողժողկոմատներն ու յերկրային, (մարզային) հողբաժինները պարտավոր են դատական պատասխանատվության յենթարկել ՄՏ կայանների (խորհտնտեսությունների) դիրեկտորներին ու նավթի բազաների վարիչներին։

Դեպի նավթամթերքն ու ամանեղենը հոգատար վերաբերմունք ունենալու և սահմանված նորմաների հանդեպ խնայողություն անելու համար, նավթի բազայի վարիչը պարգևատրվում է տարին 2 անգամ՝ հուլիսի 5-ին և հունվարի 5-ին, այն չափով, վոր կվորոշեն հանրապետությունների հողժողկոմատներն ու յերկրային (մարզային) հողբաժինները, սակայն, վոչ պակաս, քան մեկ ամսվա աշխատավարձի չափն ու



ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ

8. Նավթամթերքները տականերում պահելու համապատասխան պայմաններ ստեղծելու նպատակով, ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորները պարտավոր են իրենց անձնական պատասխանատվությամբ նավթի բազաներին կից գետնափորներ կառուցել Ուկրաինայում, Ղրիմում, Հյուս. Կովկասում, Անդրկովկասում, Միջին Ասիայում և Ստորին Վոլգայում մինչև ապրիլի 20-ը, Միջին Վոլգայում, Կ. Սևահողային մարզում, Մոսկվայի մարզում, Արևմտյան մարզում, Բելոռուսիայում, Իվանովայի մարզում, Գորկու յերկրում մինչև մայիսի 5-ը և մյուս շրջաններում վոչ ուշ քան 1934 թ. հունիսի 1-ը և վոչ մի դեպքում չթույլատրել, վոր նավթամթերքները պահվեն բաց տեղում և առանց լաստակի (պատվանդանի)։

Նավթամթերքի պաշարով լի տականները տրակտորային ջոկատներում ևս անպայմանորեն պահվում են լաստակների վրա և տականները ծածկվում են թաղիքով, քաթանով և այլն։

9. Նավթի պահպանման համար փայտե տականների պիտանելիությունը փորձելու հա-

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека

մար պարտավորեցնել ՄՏ կայանների (խորհտնտեսությունների) դիրեկտորներին՝ մինչև ս. թ. ապրիլի 1-ը յուրաքանչյուր ՄՏ կայանում (խորհտնտեսությունում) պատրաստել առնվազն 10 հատ փայտե տակառ և լցնել այն նավթով։

Յերկր. (մարզ.) հողբաժիններին և հանրապետությունների հողժողկոմատներին՝ հատուկ հսկողություն սահմանել այդ տարայի վիճակի վրա և մինչև հունիսի 1-ը հայտնել ԽՍՀՄ Հողժողկոմատին՝ նրանց մասսայական օգտագործման հնարավորության մասին։

10. Հանրապետությունների հողժողկոմատները, յերկր. (մարզ.) հողբաժինները և ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորները պարտավոր են ապահովել նավթի բաքերի անընդհատ ֆինանսավորումը՝ մատակարարողների հետ հաշիվները մաքրելու համար։

11. ՄՏ կայանների ու խորհտնտեսությունների դիրեկտորները պարտավորվում են նավթի բաքերը լիովին ապահովել տրանսպորտով, այդ նպատակով



մշտապես կցելով կոլտնտեսային սայլերի և ավտո-ցեխերի մշտական կազմ։

Նավթամթերքի ու սարքավորման արմատուրայի կորուստն ու փչացումը կանխելու, ինչպես և տրակտորների պարապ յերթևեկությունը կրճատելու համար, առնվազն 3 տրակտորից բաղկացած տրակտորային բրիգադը պետք է ունենա շարժական սարքավորման կետ, հատուկ աշխատավորով-սարքավորողով։ Յերեքից պակաս տրակտոր ունեցող տրակտորային ջոկատում սարքավորողի դերը կատարում է բրիգադիրը։

Պարապ յերթևեկությունը կրճատելու համար տրակտորների սարքավորումն անպայման կատարել աշխատանքի վայրում, որի համար սարքակետը պետք է մոտենա և թույլ չտա, որ տրակտորը սարքվելու համար դուրս գա ակոսից։ Տրակտորիստների հերթափոխության ժամանակ վառելանյութերի չափումը կատարվում է ակոսում և այդ նպատակով ակոսից դուրս գալ թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում։

Ցարժական սարքավորման կետը պետք է սարքավորված լինի ՄՏ Կայանի (խորհտնտեսության) կողմից գյուղացիական միածի կամ յերկձի սայլակի վրա և պիտի կազմված լինի 1 հատ ստանդարտ մետաղե տակառից՝ նավթի համար, 1 հատ փայտե տակառից՝ յուղելու նյութերի համար, և մեկ փայտե արկղից՝ բենզինի բիդոնի համար և սարքավորելու ինվենտարից։

Տրակտորները վառելիք լցնելը կատարել Ալվեյրի մղիչով (նասոս) կամ, ծայրահեղ դեպքում, «լիվեր» տնայնագործական մղիչով։ Ավտոլ լցնելը կատարել անպայման քաշիչ կրանի միջոցով, սարքավորման սայլակի վրա դրված տակառից, հատուկ ամանով։

1934 թվի գարնանացանի կամպանիային նավթի տարան և սարքավորման ինվենտարը պետք է հաստատապես ամրացված լինեն առանձին տրակտորային ջոկատներին։

ԽՍՀ Հողժողկոմ ՅԱ. ՅԱԿՈՎԼԵՎ

Մոսկվա հունվարի 5, 1934 թ.

ՀՍՍՌ – Арм ССР



## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ Ազգային գրադարան
NL0276837

14510
Ua 659